ՀՏԴ 338 *Տնտեսագիտություն*

Միքայել Մելքումյան, տ. Գ. Դ.,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրության
կազմակերպման ամբիոնի պրոֆեսոր,

Արթուր Առաքելյան , տ. Գ. Թ. ,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրության
կազմակերպման ամբիոնի ասիստենտ,

ԳՆԱՃԻ և ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆԵՍԱԿԱՆ ՆԵՐԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայաստանը 2018 թվական մտավ առաջին անհրաժեշտության մի շարք ապրանքների գնաճով, ինչը պատճառ հանդիսացավ տնտեսության ներկա կառուցակարգի խնդիրների մասին քննարկումների ծավալման համար: Առկա գնաճը հիմնականում պայմանավորված է ոչ թե դրամական զանգվածի ծավալով, այլ տնտեսության մոնոպոլացման բարձր մակարդակով, հարկային նոր օրենսգրքով հարկային բեռի ավելացմամբ: Արդյունքում երկրում տեղի է ունենում սոցիալական դեմպինգ: Շրջանառվող գումարը գտնվում է մի քանի խոշոր սուբյեկտների ձեռքում, որի աճը էապես չի ազդում բնակչության կենսամակարդակի վրա՝ հանգեցնելով սոցիալական բևեռացման մակարդակի աճին:

Բանալի բառեր՝ *Գնաճ, աղքատություն, եկամուտների բաշխում, մրցակցություն*

Михаил Алексанян, Артур Аракелян

ОБ ИНФЛЯЦИИ И СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИХ ПРОБЛЕМАХ НАСЕЛЕНИЯ

В 2018 год Армения вошла с повышением цен на товары первой необходимости, что стало причиной возникновения дискуссий по проблемам нынешней экономической системы. Существующая инфляция в основном обусловлена не объемом денежной массы, а высоким уровнем монополизации экономики, с увеличением налоговой нагрузки согласно новому Налоговому кодексу. В результате в стране происходит социальный демпинг. Объем денежного обращения находится в руках нескольких крупных субъектов, рост которого существенно не влияет на уровень жизни населения, что приводит к росту уровня социальной поляризации.

Ключевые слова: *Инфляция, бедность, распределение доходов, конкуренция*

Michael Alexanyan, Arthur Araqelyan

ABOUT INFLATION AND SOCIAL-ECONOMIC PROBLEMS OF THE POPULATION

Armenia entered 2018 with inflation of several first essential goods which led to discussions on the current state of the economy. The current inflation is mainly conditioned not only by the volume of money supply, but also on the high level of monopolization of the economy, with the increase of the tax burden by the new Tax Code. As a result, social dumping occurs in the country. The circulating amount is in the hands of several major entities, which growth does not significantly affect the living standards of the population, leading to the growth of social polarization.

Key words: *Inflation, poverty, income distribution, competition*

Հայաստանը 2018թ. Թևակոխեց սոցիալ-տնտեսական փոքր-ինչ անբարենպաստ կարգավիճակով՝ պայմանավորված առաջին անհրաժեշտության, սպառողական զամբյուղում ընդգրկված և դրանից դուրս մի շարք ապրանքատեսակների թանկացմամբ: Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ կարագի գինը 2017 թվականի ավարտին բարձրացավ 40.7 տոկոսով, խոզի մսինը՝ 40 տոկոսով, գառան մսինը՝ 26 տոկոսով, տավարի մսինը՝ 12 տոկոսով, ձկան և ծովամթերքի գները 25 տոկոսով, կարտոֆիլինը՝ 29 տոկոսով, կաթնամթերքինը՝ 4.5 տոկոսով, իսկ պանրի գինը՝ 8 տոկոսով: Թանկացած նաև բենզինը, սեղմված գազն ու դիզելային վառելիքը: Բենզինի գինը 2017 թվականին 380 դրամից բարձրացավ 410 դրամի, իսկ հունվարին՝ մինչև 430 դրամի: Սեղմված գազի գինը 2017 թվականի 190 դրամի դիմաց դարձավ 210 դրամ, իսկ դիզելային վառլիքի գինը 390 դրամից բարձրացավ 440 դրամի:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ նշված թանկացումները պայմանավորված են մի կողմից արտաքին շուկաներում այդ ապրանքների գնաճով, մյուս կողմից հարկային բեռի ավելացմամբ այդ ապրանքների նկատմամբ և ներքին շուկայում կենտրոնացվածության բարձր մակարդակ ունեցող շուկաների առկայությամբ:

Եթե 2017 թվականի ընթացքում կարագի, մսի, պանրի միջազգային գներն աճել էին, ինչն ազդեցություն ունեցավ նաև ՀՀ տեղական շուկայի վրա, ապա բենզինի, գազի և դիզելային վառելիքի մասով այդպիսի միտումներ չկային: Այդ բարձրացումները պայմանավորված էին հարկային բեռի ավելացմամբ՝ սեղմված գազի 1000 խմ համար գանձվող ակցիզային հարկի 8330 դրամից 25000 դրամի բարձրացմամբ, բենզինի 1 տոննայի համար գանձվող ակցիզային հարկի՝ 25000 դրամից 40000 դրամի բարձրացմամբ և դիզելային վառելիքի նկատմամբ ավելացված արժեքի հարկի կիրառմամբ: Հաշվարկները ցույց են տալիս, որ այդ փոփոխությունները բենզինի վրա ազդել են բարձրացման ուղղությամբ շուրջ 20 դրամով, սեղմված գազի վրա 20 դրամով, իսկ դիզելային վառելիքի վրա 40 դրամով: Հաշվի անելով բենզինի շուրջ 140 հազար տոննա, դիզելային վառելիքի շուրջ 120 հազար տոննա տարեկան ներկրման ծավալներն ու սեղմված գազի իրացման 0.5 մլրդ խմ ծավալները, կարող ենք ասել, որ այս փոփոխությունը ՀՀ պետական բյուջե կբերի 12-14 մլրդ դրամ հավելյալ հարկային եկամուտ:

Պայմանավորված նշված ապրանքների պահանջարկի գնային ճկունության ցածր մակարդակով՝ այդ բեռը գրեթե ամբողջովին ընկնում է սպառողների վրա՝ նվազեցնելով նրանց՝ առանց այդ էլ ցածր եկամուտները:

Այս պայմաններում պետությունը պետք է ակտիվորեն պայքարի գնաճի դեմ՝ թույլ չտալով, որպեսզի երկրում տեղի ունենա այսպես կոչված սոցիալական դեմպինգ: Պայքարի ուղղությունները, սակայն, չեն կարող կրել մոնետար բնույթ, քանի որ առկա գնաճը պայմանավորված չէ դրամական զանգվածի մեծությամբ: Այստեղ վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխությամբ հնարավոր չէ արդյունավետ լուծում տալ: Անհրաժեշտ է խթանել արտադրությունը, նպաստել բարձենպաստ մրցակցային միջավայրի ձևավորմանը, իջեցնել հարկային բեռը, բարձրացնել աշխատավարձերը և թոշակները:

Ցավոք, արդեն իսկ հայտարարվել է, որ առաջիկա երեք տարիների ընթացքում աշխատավարձերի, նվազագույն աշխատավարձի և թոշակների բարձրացում չի լինելու: Այս պայմաններում արդիական է դառնում գոնե եկամտային հարկի դրույքաչափերի իջեցումը մինչև 150 հազար դրամ ամսական եկամուտ ստացողների համար՝ 23 տոկոսից 21 տոկոսի, իսկ մինչև 300 հազար դրամ ամսական եկամուտ ստացողների համար 28 տոկոսից 26 տոկոսի:

Մրցակցային անբարենպաստ միջավայրովպայմանավորված, նույնիսկ տնտեսական աճի չի թուլացնում առկա սոցիալական լարվածությունը: Քաղաքացին չի զգում այդ աճն իր մաշկի վրա, քանի որ աճից ստացված միջոցները շրջապտույտ են կատարում սահմանափակ թվով սուբյեկտների մոտ:

Ասվածը պատկերավոր ցույց տալու համար առանձնացնենք Հայաստանի պայմանական երկու քարտեզ:

Մի կողմում տնտեսականն է՝ դրանք բանկերն են, ապահովագրական ընկերությունները, կապի օպերատորները, գազի, ջրի ու էլեկտրաէներգիայի մատակարարները, խոշոր ներկրողները, առևտրային ցանցերը, մոլերը և այլն: Եվ ամբողջ գումարի մեծ մասը պտտվում է այս սուբյեկտների ձեռքում: Հաշվարկները ցույց են տալիս, որ Հայաստանում թվով 7 սուբյեկտ դեռևս ներկրում է 20000 ապրանք: Այդ խնդիրը մինչ օրս առկա է, որի հետևաքները հանգեցնում են նրան, որ տեղի է

ունենում գնաճ, ՓՄՁ շահութաբերության նվազում և արդյունքում տեղի է ունենում սոցիալական դեմպինգ: Աղքատությունը ավելանում է, արտագաղթը նույնպես և այլն:

Մյուս կողմում սոցիալական քարտեզն է՝ շուրջ 30 տոկոս աղքատություն, ցածր միջին ամսական աշխատավարձ (187914 դրամ), եկամուտների անհավասար բաշխում, չզարգացած փոքր բիզնես:

Ցավոք, այս երկու քարտեզների միջև կապն այնքան թույլ է, որ տնտեսական աճը, որն ապահովվում է տնտեսական քարտեզում, չի ազդում սոցիալական քարտեզի վրա: Ավելացած միջոցներն անընդհատ պտտվում են սահմանափակ թվով սուբյեկտների մոտ՝ չնպաստելով սոցիալական պատկերի բարելավմանը:

Այսինքն՝ շրջնառության մեջ գտնվող փողը անընդհատ պտտվում է խոշորների ձեռքում, և քանի որ աշխատավարձեր և թոշակներ չեն բարձրանում, նոր աշխատատեղեր չեն ստեղծվում, եղած գումարը և դրա աճը որևէ կերպ չեն ազդում մեր հասարակության ստվար զանգվածի սոցիալական վիճակի բարելավման վրա: Սրան ավելանում է նաև տեղական փոքր շուկայի առկայությունը, ինչը թույլ չի տալիս խոշոր ներդրումներ կատարել, որի արդյունքում՝ եղած ազատ միջոցները հոսում են դուրս: Պակասում են նաև օտարերկրյա ներդրումները: Նույնիսկ 2017թ. Առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ընդհանուր ներդրումների զուտ հոսքերի ծավալը (օտարերկրյա ներդրումների գծով ստացումների և մարումների տարբերությունը) կազմել է -24.8 մլրդ դրամ, ինչը մոտ 65%-ով պակաս է 2016թ. Գրանցված ցուցանիշից և գրեթե 130%-ով զիջում է 2015թ.-ի համադրելի ցուցանիշին: Վերջինս նշանակում է, որ 2017թ. Առաջին կիսամյակում օտարերկրյա ընդհանուր ներդրումների գծով մարումները գերազանցել են ստացումները, ինչը բավականին անհանգստացնող ցուցանիշ է Հայաստանի նման կապիտալ հոսքերի պակասորդ ունեցող երկրի համար:

Աղյուսակ 1. Օտարերկրյա ներդրումների ծավալները 2013-2016թթ.

	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Ընդամենը օտարերկրյա ներդրումներ, մլն դոլար	1 941	851.8	811	1 215
Ուղղակի օտարերկրյա ներդրումներ, մլն դոլար	469.2	382.8	180.5	338

Ինչ վերաբերում է օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերի ծավալին, ապա 2017թ. Հունվար-հունիս ամիսների ընթացքում այն կազմել է 17.3 մլրդ դրամ, ինչը 2016թ. Համադրելի ցուցանիշի համեմատությամբ պակաս է մոտ 1.2 մլրդ դրամով կամ մոտ 7%-ով, իսկ ահա 2015թ. Գրանցված արդյունքից պակաս է շուրջ 13.4 մլրդ դրամով կամ 44 տոկոսային կետով:

Բնական է, որ այս ամենի արդյունքում տուժում է նաև փոքր ու միջին ձեռնարկատիրությունը: Դրա մասնակցությունը ՀՆԱ-ում չի անցնում 20 տոկոսի սահմանը, մինչդեռ Եվրոպական երկրների համանուն միջին ցուցանիշը կազմում է 57 տոկոս:

Աղյուսակ 2. Փոքր և միջին ձեռնարկությունների դերը ԵՄ երկրներում

	ՓՄՁ մասնաբաժինը ավելացված արժեքում	ՓՄՁ-ում ներգրավված աշխատողների թվաքանակն ընդհանուրի մեջ
Մալտա	80.35%	81.02%
Հունաստան	75.13%	87.3%
Բելգիա	62.2%	69.93%
ԵՄ Միջին	57.39%	67.76%
Մեծ Բրիտանիա	52.06%	53.59%
Իռլանդիա	47.3%	70.99%

Նման պայմաններում ոչ միայն խաթարվում է եկամուտների արդարացի բաշխման խնդիրը ներկա ժամանակներում, այլև ստեղծվում է մի իրավիճակ, երբ հարաբերականորեն հարուստների ժառանգները հայտնվում են մրցակցային ավելի բարենպաստ պայմաններում՝ հնարավորություն ունենալով օգտվել բարձրակարգ կրթական և առողջապահական ծառայություններից: Նրանք, փաստորեն, ի վերուստ առավել լայն հնարավորություններ են ունենում հետագայում կատարելու բարձր վարձատրվող աշխատանք կամ ունենալու սեփական բիզնես: Արդյունքում եկամուտների անհավասար բաշխումը կրում է ժառանգական բնույթ: Ուստի զարգացած և զարգացող երկրների կառավարությունների հիմնական խնդիրը պետք է լինի եկամուտների բաշխման անհավասարության ժառանգականության աստիճանական վերացումը՝ ցածր եկամուտներ ստացողներին գոնե կրթական և առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորություններ ստեղծելով: Սրանով մրցակցային հավասար դաշտ կստեղծվի հարուստների և աղքատների զավակների միջև, ինչը կնպաստի եկամուտների արդարացի բաշխման արդյունավետության բարձրացմանը ապագայում:

Օգտագործված գրականության ցանկ

- ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջ, Armstat.am
- ՀՀ ՏՄՊՊՀ պաշտոնական կայքէջ, Competition.am
- ՀՀ Ֆինսնաների նախարարության պաշտոնական կայքէջ, Minfin.am
- The European Commission’s website, Ec.europa.eu